

Դոհայի համաձայնագիրը ԱՄՆ–Աֆղանստան հարաբերություններում նոր շրջափուլի թևակոխման սկիզբ

Մաթևոսյան Հարություն Ա.

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, ասպիրանտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0006-2840-8245>

harutyun.matevosyan@edu.isec.am

ՀՏԳ՝ 94(5); EDN: HFZQBO;

DOI: 10.58587/18292437-2024.5-39

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Աֆղանստան, ԱՄՆ, Տալիբան, ՆԱՏՕ, զինված ուժեր, պատերազմ, Դոհայի համաձայնագիր, ահաբեկչություն

The Doha Agreement as the Beginning of a New Period in US-Afghanistan Relations

Matevosyan Harutun A.

NAS RA, Institute of Oriental studies, PHD student (Yerevan, RA)

Abstract: On February 29, 2020, the United States and the Taliban signed an agreement to establish peace in Afghanistan, which became widely known as the Doha Agreement. This agreement marked the end of one of the largest and bloodiest conflicts of the 21st century, the Afghan Civil War. The Doha Agreement is crucial to consider within the context of Afghan transitions, as well as the signing and content of the agreement itself, which became a turning point for the future of Afghanistan and its people, signaling the end of the long-standing presence of American and coalition forces in Afghanistan. The Doha Agreement is based on four key points: the withdrawal of American and coalition forces, the Taliban's commitment to conduct counter-terrorism operations, the initiation of intra-Afghan negotiations, and the establishment of a comprehensive and long-lasting peace. The Doha Agreement became a turning point in U.S. foreign policy, though it did not lead to long-term peace in Afghanistan. Nevertheless, it marked the beginning of a reevaluation of U.S. foreign policy in the Indo-Pacific region. On the other hand, the agreement is also significant because the U.S. engaged in peace negotiations and signed an agreement with the Sunni extremist group known as the Taliban, which, to this day, it does not recognize as the official ruling force in Afghanistan.

Keywords & phrases: Afghanistan, USA, Taliban, NATO, armed forces, war, Doha agreement, terrorism

Дохийское соглашение – начало нового периода в отношениях США и Афганистана

Матевосян Арутюн А.

аспирант, Институт Востоковедения, НАН РА (Ереван, РА)

Аннотация. 29 февраля 2020 года Соединённые Штаты и Талибан подписали соглашение о достижении мира в Афганистане, которое стало широко известно как Дохийское соглашение. Это соглашение ознаменовало окончание одной из крупнейших и самых кровопролитных конфликтов XXI века — Афганской гражданской войны. Дохийское соглашение важно рассматривать в контексте афганских преобразований, а также в свете самого подписания и содержания этого соглашения, которое стало поворотным моментом для будущего Афганистана и его народа, обозначив завершение долгосрочного присутствия американских и коалиционных сил в стране. Дохийское соглашение основано на четырёх ключевых пунктах: вывод американских и коалиционных войск, обязательство Талибана проводить контртеррористические операции, начало внутриафганских переговоров и установление всеобъемлющего и долгосрочного мира. Хотя Дохийское соглашение стало поворотным моментом во внешней политике США, оно не привело к долгосрочному миру в Афганистане. Тем не менее, оно ознаменовало начало переоценки внешней политики Соединённых Штатов в Индо-Тихоокеанском регионе. С другой стороны, это соглашение также значимо тем, что США вели мирные переговоры и подписали соглашение с суннитской экстремистской группировкой, известной как Талибан, которую они до сих пор не признают в качестве официальной правящей силы в Афганистане.

Ключевые слова и словосочетания: Афганистан, США, Талибан, НАТО, вооруженные силы, война, Дохийское соглашение, терроризм

Նախաբան

2001 թվականի սեպտեմբերը շրջադարձային էր ամերիկյան արտաքին քաղաքականության առաջնահերթությունների համար: Աֆղանստանը, որը գտնվում էր այդ առաջնահերթությունների ցածր կետում, ժամերի ընթացքում դարձավ այդ քաղաքականության ամենա-

կարևոր ուղղությունը: ԱՄՆ-ում սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունները, երբ չորս առևանգված ինքնաթիռներ ուղղություն վերցրին դեպի Պենտագոնի և Համաշխարհային առևտրի կենտրոնի երկու աշտարակները, որի հետևանքով զոհվեց 3000 մարդ և վիրավորվեցին տասնյակ հազարավոր մարդիկ, ազդանշան

դարձավ ամերիկյան կառավարության համար՝ պատերազմ հայտարարելու միջազգային ահաբեկչությանը: Այս ամենի արդյունքը հանդիսացավ այն, որ ամիսների ընթացքում կազմակերպվեց և իրականացվեց ամերիկյան և դաշնակից ուժերի տեղակայումը Աֆղանստան՝ ոչնչացնելու ալ-Կաիդայի ղեկավարությանը, ինչպես նաև ահաբեկիչների կողմից օգտագործվող ճամբարները, որոնք համարվում էին Տալիբանին: Ըստ էության, այս փուլի մեկնարկից սկսած, փոխվում է Միացյալ Նահանգների տարածաշրջանային քաղաքականությունը, որը շարունակական է մինչ օրս: Միանգամայն, ահաբեկչության դեմ պատերազմը դարձավ ամերիկյան քաղաքականության գլխավոր ուղղությունը, որը պիտի իր լուրջ արձագանքը ստանար Աֆղանստանում, քանզի ահաբեկչական խմբավորումների գլխավոր ապաստարանը հանդիսանում էր Աֆղանստանը Տալիբան կոչվող խմբավորման գլխավորությամբ:

ԱՄՆ-Աֆղանստան հարաբերությունների տրանսֆորմացիան և գորքերի դուրսբերման վերաբերյալ մտորումները 2010-ական թթ.

2001 թ-ի ահաբեկչական գործողությունների մեկնարկից հետո Միացյալ Նահանգները և կոալիցիոն ուժերը սկսեցին ռազմական և քաղաքական հեգեմոնիայի հաստատման ժամակահատված Աֆղանստանում [1, էջ 34]: Մի քանի ամիսների ընթացքում ՆԱՏՕ-ի ուժերի կողմից իրականացվեցին մի շարք ռազմական գործողություններ, որոնց արդյունքը 2001 թվականի դեկտեմբերին Աֆղանստանում տալիբների իշխանության թուլացումն ու հեռացումն էր պայմանավորված Պենտագոնի և մյուս շենքերի նկատմամբ ահաբեկչական գործողություններին իրենց աջակցությունը ցուցաբերելու հետ [3, էջ 14]: Միացյալ Նահանգների հովանու ներքո սեղմ ժամկետում ձևավորվեց Աֆղանստանի ժամանակավոր կառավարությունը և սկսվեց կայունացման մի ժամանակաշրջան, որը վերաբերում էր առաջնային ինստիտուտների և ենթակառուցվածքների ստեղծմանը և ձևավորմանը [2, էջ 32]: Այս գործընթացներից հետո իրավիճակը որոշակիորեն կայունացավ, որից հետո Աֆղանստանում անցկացվեցին նախագահական ընտրություններ, որտեղ նախագահ ընտրվեց Համիդ Զարգայը, կարճ ժամանակ անց ընդունվեց նաև նոր սահմանադրություն [4, էջեր 76-78]: Խաղաղության և անվտանգության համեմատաբար կայուն իրավիճակը տևեց գրեթե հինգ տարի, մինչ տալիբները նորից հայտնվեցին և իրենց դիրքավորեցին որպես ապստամբական ուժ՝ մարտահրավեր նետելով Աֆղանստանի կառավարությանն ու արտաքին ուժերին: Նորաստեղծ սպառնալիքների արդյունքում 2009

և 2010 թվականներին ԱՄՆ-ն իրականացրեց ռազմական և դիվանագիտական մի քանի խոշոր գործողություններ: Այս հաջող գործ ղությունները և ամերիկյան ուժերի տեղակայումը Աֆղանստանում ավելի քան մեկ տասնամյակ հանգեցրին տալիբանյան զինված խմբերի ճնշմանը:

Ամերիկյան ուժերը շարունակում պահպանել իրենց ռազմական ներկայությունը Աֆղանստանում՝ Resolute Support Mission (RSM)¹ առաքելության անվան տակ: Թեև ԱՄՆ-ՆԱՏՕ-ի գլխավորած հիմնական ռազմական գործողություններն ավարտվել էին դեռևս 2014 թվականին, այնուամենայնիվ, Աֆղանստանի անվտանգության ուժերին աջակցելու համար տեղում էին մոտ 10,000 ԱՄՆ-ի զինծառայողներ և ևս մի քանի հազար ՆԱՏՕ-ի զինծառայողներ [5]: Այս ուժի հիմնական նպատակը Աֆղանստանի անվտանգության ուժերին ուսուցանելը, խորհրդատվություն և օգնություն տրամադրելն էր: Ուստի մոտավորապես պայագայու դիտարկվում էր ԱՄՆ-ի կողմից իր ուժերը դուրս բերելու մտայնությունը՝ ունենալով ինչպես քաղաքական, այնպես էլ համընդհանուր համաձայնություն իր քաղաքացիների շրջանում Աֆղանստանում պատերազմը դադարեցնելու վերաբերյալ: Հետևաբար, 2021 թվականին ամերիկյան և դաշնակից զորքերը դուրս բերվեցին Աֆղանստանից ավելի քան քսան տարվա ռազմական գործողություններից հետո, և Տալիբանը, որը երկու տասնամյակ շարունակ ակտիվորեն պայքարում էր այդ ուժերի դեմ, կրկին հետվերադարձավ իշխանության:

ԱՄՆ երեք նախագահների շրջանում ռազմական ներկայության վերացման հարցը շարունակում էր մնալ օրակարգում, սակայն քաղաքական որոշում այդպես էլ չէր կայացվում: Ուստի, դժվար է պնդել, որ «դաշնակից» ուժերի հեռանալն անակնկալ էր Աֆղանստանի կառավարության ու ժողովրդի համար: 2021 թվականի օգոստոսին Աֆղանստանից ամերիկյան զորքերի կտրուկ և քառասյին դուրսբերումը դրամատիկ ցնցում էր շատերի համար Եվրոպայում և Միացյալ Նահանգներում և թվում էր, թե սպառնում էր անդրատլանտյան գործընկերության լուրջ խզմանը: Իրավացիորեն, ամերիկյան զորքերը դուրս բերելու որոշումը իրականում քննարկվում էր տարիներ շարունակ: Նախագահ Ջո Բայդենի դիրքորոշումը Աֆղանստանից

¹ Resolute Support Mission (RSM) կամ Վճռական աջակցության առաքելություն ՆԱՏՕ-ի գլխավորած բազմազգ առաքելություն էր Աֆղանստանում: Այն սկսվել է 2015 թվականի հունվարի 1-ին՝ որպես Անվտանգության աջակցության միջազգային ուժերի (ISAF) իրավահաջորդ, որն ավարտվել է 2014 թվականի դեկտեմբերի 28-ին: Համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2014 թվականի 2189 բանաձևի՝ RSM-ը ոչ մարտական առաքելություն էր, որն ուղղված էր Աֆղանստանի անվտանգության խորհրդատվությանն ու ուսուցմանը:

ամերիկյան գորքերը դուրս բերելու հարցում հայտնի էր ավելի քան մեկ տասնամյակ: Բայդենը ԱՄՆ երրորդ նախագահն էր, ով վերակողմնորոշեց ԱՄՆ-ի քաղաքականությունը հնդկաստանյան տարածաշրջանի նկատմամբ, վերանայեց զինվորականների դերը Մերձավոր Արևելքում և հստակեցրեց ամերիկյան ռազմական միջամտությունները ազգային շահերի կարևորության գնահատմամբ: Շատերի կողմից ԱՄՆ-ի դուրս գալն ուղղակիորեն հակասում էր նախագահ Բայդենի երկու ամենակարևոր խոստումներին՝ վերականգնել ամերիկյան առաջնորդությունը և ապահովել ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները գլոբալ աշխարհում: Սակայն, ռազմական ուժի կիրառման հարցում զսպամոլություն ցուցաբերելու նոր մոտեցումը ընդգծեց ԱՄՆ-ի նոր ռազմավարությունը և ենթադրեց, որ դիվանագիտությունը և այլ միջոցներ կկիրառվեն ԱՄՆ արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար: Բայդենի ռազմավարությունը շեշտը դրել էր երկկողմ, բազմակողմ և տարածաշրջանային գործընկերության վրա, ինչպես նաև այնպիսի միջոցների վրա, ինչպիսիք են թիրախավորված պատժամիջոցները, որոնք չեն ենթադրում ռազմական ուժի ուղղակի կիրառում:

Դոհայի բանակցային գործընթացը և ԱՄՆ գորքերի դուրսբերման վերաբերյալ քննարկումները

Համաձայնագրի շուրջ կողմերի բանակցությունները սկսվել են դեռ 2018 թվականին, սակայն հատկանշական է, որ Աֆղանստանի իշխանությունները երբեք չեն ներգրավվել ո՛չ բանակցություններին, ո՛չ էլ համաձայնագրի ստորագրմանը: Բանակցությունները սկսվել են ավելի վաղ, սակայն ամերիկացի դիվանագետները հրապարակայնորեն մեկնաբանել են բանակցությունների վերաբերյալ մեկնարկից մեկ տարի անց: Բանակցությունների մասին հրապարակային խոսույթը մեծացավ արդեն 2018 թ. հոկտեմբերին, երբ Չայմայ Խալիլզադը ԱՄՆ-ի կողմից նշանակվեց Աֆղանստանի հաշտեցման հարցերով հատուկ ներկայացուցիչ և մեկնեց Դոհա՝ բանակցությունները շարունակելու Տալիբանի ներկայացուցիչների հետ [6, էջ 2]: Այնուհետ էր, որ այս իրադարձությունները միմիայն նպատակադրված էին խնդրի արագ կարգավորմանը: Տալիբանի կողմից գլխավոր բանակցողը հանդիսանում էր Մուլլահ Աբդուլ Դանի Բարադարն: Վերջինս Տալիբանի կարկառուն ներկայացուցիչներից մեկն էր, մեծապես հայտնի տալիբանյան միջավայրում բարձր դիրք գրավող անձանցից մեկը: Վերջինս մասնակցություն է ունեցել նաև աֆղանական պատերազմում Խորհրդային միության գորքերի դեմ: Բարադարը համարվում է Մուլլահ Օմարի ամենամտերիմ ընկերներից մեկը [7, էջ 3], ինչպես նաև

Տալիբանի հիմնադիրներից մեկը: 2010 թ.-ին երկարատև հետախուզումից հետո Բարադարը ձերբակալվում է պակիստանյան հատուկ ծառայությունների կողմից, և այս ձերբակալումը մեծ արձագանք է գտնում տարբեր լրատվական աղբյուրներում, քանզի Բարադարը այդ ընթացքում գաղտնի բանակցություններ էր վարում Բարգայի կառավարության հետ [8]: Բարադարը ազատ արձակվեց 2018 թ.-ի վերջին, երբ ակտիվացել էին ԱՄՆ-Տալիբան բանակցությունները: Ըստ տարբեր աղբյուրների, ազատ արձակումը մեծապես կախված է եղել ամերիկյան դիվանագիտական ճնշումներով, քանզի Խալիլզադը Բարադարին դիտարկում էր որպես առանցքային օղակ բանակցությունների վերջնական փուլին հասնելու համար [9]: Այսպիսով, Տալիբանի կողմից Բարադարը նշանակվում է որպես գլխավոր բանակցող և 2020 թ.-ին Դոհայում հենց ինքն է ստորագրում խաղաղություն հաստատելու մասին համաձայնագիրը:

ԱՄՆ-Տալիբան բանակցությունների վերաբերյալ բաց աղբյուրներում հրապարակեցին 2019 թ.-ի սկզբին և, ըստ հրապարակվող նյութերի, բանակցությունների հիմնակետերն էին ՆԱՏՕ-ի ուժերի դուրսբերումը, հակաահաբեկչական գործողությունների իրականացումը և հրադարարը: Այս փուլում արդեն սկսվեցին քննարկել ներաֆղանական բանակցություններ սկսելու կարևորության մասին [10, էջ 3]: Նախագահ Թրամփը առաջին անգամ հայտարարեց նաև ամերիկյան ավելի քան 7 հզ. գործի կրճատման և դուրսբերման մասին, ինչը ցույց էր տալիս, որ բանակցությունները հասնում են որոշակի հանգուցակետի [11]: Բանակցությունները Դոհայում տեղի ունեցան ամբողջ 2019 թ.-ին՝ ավելի քան 9 փուլերով:

Նախագահ Բայդենը, երբ ստանձնեց նախագահական աթոռը, ամերիկյան գորքերի ներկայությունը կրճատվել էր մինչև 2500 զինծառայողի այնուամենայնիվ այս ներկայությունը պահպանվում էր արդեն երկու տասնամյակ, ուստի կարևորագույն նպատակները, արդեն հեռացել էին նախնական շրջանակից: Առաքելությունը, որը սկսվել էր 9/11-ի ահաբեկչական հարձակումների «պատասխանատուներին» հաղթելու համար, արագորեն ընդլայնվեց՝ ներառելով հակաահաբեկչությունը, ինչպես նաև պետության կառուցման ավելի համապարփակ մոտեցումը: Չնայած տալիբաններին հաղթելու ավելի վաղ շրջանի հաջողություններին, Բուշը, Օբաման և Թրամփը փորձեցին և չհաջողեցին վերջնականորեն դուրս բերել ամերիկյան գորքերը Աֆղանստանից: Ուստի, Բայդենը ոչ միայն ժառանգել է այլ իրավիճակ Աֆղանստանում, այլ նաև անձնական պարտավորություն ուներ Աֆղանստանից ամերիկյան գորքերը դուրս բերելու հարցում: Որպես փոխնախագահ,

նա բուռն հակառակորդն էր ԱՄՆ-ի ներգրավվածության պահպանմանը Աֆղանստանում և բախվել էր Օբամայի վարչակազմի այլ անդամների հետ աֆղանական քաղաքականության հարցում: 2009-ին Բայդենը քննադատում էր այն զորքերի քանակի աճը, որի հետևանքով 30,000 լրացուցիչ ամերիկացի զինվոր ուղարկվեց Աֆղանստան [12, էջ 5]:

Նախագահ Թրամփն իր առաջին ժամկետում նույնպես վճռական էր համաձայնության հասնել տալիքների հետ, սակայն Թրամփի բանակցությունները չընդգրկեցին Աֆղանստանի կառավարությանը: Սակայն գործարքի մասին հայտարարելու Թրամփի վճռականությունը խաթարեց Աֆղանստանում ապագա կայունության պահպանման վերաբերյալ հիմնական ցանկությունները, ինչը ուղղակիորեն հանգեցրեց Աֆղանստանից ամերիկյան զորքերը դուրս բերելու նախագահ Բայդենի որոշմանը: Նա պնդում էր, որ ստատուս քվոն անկայուն է, և եթե ԱՄՆ զորքերը մնան, տալիքները կօգտագործեն դա արդարացնելու բռնության աճի մեծացումը [13, էջ 260]: Նախագահ Բայդենը խորապես հավատում էր, որ ստատուս քվոն չի լինի երկարատև: Ամերիկյան զորքերի ներկայությունը նվազել է մինչև 2500-ի, և ամերիկյան կողմը դեռևս լուրջ կորուստներ չունի, սակայն տալիքները պարզապես սպասում էին իրենց ուժերի դուրսբերմանը, ըստ համաձայնագրի պահանջների, և եթե ԱՄՆ-ը խախտի Աֆղանստանից իր պարտավորությունները համաձայնեցված ժամկետում, ապա տալիքները կվերսկսեն ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին դուրս մղելու գործողությունները: Սա կնշանակի, որ Աֆղանստանում գտնվող 2500 ամերիկացի զինվորականները կգրկվեն այն ամենից, ինչ պահանջվում է խաղաղության և կայունության պահպանման համար՝ թողնելով ԱՄՆ-ին դժվարին ընտրության առաջ՝ դուրս գալ, շարունակել հարձակումները կամ ավելացնել զորքերի հնարավորությունները:

Սա նախագահ Բայդենի որոշման նախապատմությունն էր: ԱՄՆ-ի գլոբալ դերի ռազմավարական հարցում ԱՄՆ նախագահի անձնական տեսակետները, որոնք խորապես դեմ էին պատերազմին, հեռացել էր իր սկզբնական նպատակներից շատ ավելի հեռու: Նա նաև ինտենսիվ ճնշման տակ էր իր երկրում, քանի որ համաճարակը շարունակվում էր, երկիրը խորապես բաժանված էր առանցքային հարցերի շուրջ, ինչպիսիք են տնտեսությունը և համաճարակը: Նախագահ Բայդենը կանգնել է ընտրության առաջ՝ դուրս բերել զորքերը և վտանգել, որ տալիքները կվերցնեն կառավարումը, կամ ուղարկել ավելի շատ ԱՄՆ զորքեր և վտանգել, որ ընդդիմությունը կողմից ճնշման կենթարկվի հայրենիքում:

Ի վերջո, 2019 թ.-ի վերջին արդեն պարզ էր, որ Միացյալ Նահանգները գնում է իր արտաքին քաղաքականության խոշորագույն շրջադարձերից մեկին: 2020 թ.-ի փետրվարի արաբական աշխարհում արդեն առաջնորդող լինելու հավակնորդ հանդիսացող Կատարի մայրաքաղաք Դոհայում մի կողմից Միացյալ Նահանգների (ներկայացուցիչ՝ Չավայ Խալիլզադ) և մյուս կողմից Տալիբանի (ներկայացուցիչ՝ Օմար Մուլլահ Դանի Բարադար) միջև ստորագրվում է խաղաղության համաձայնագիրը: Համաձայնագիրը ստորագրումը տեղի ունեցավ Դոհայում 2020 թ.-ի փետրվարի 29-ին: Համաձայնագիրը բավականին հանդիսավոր պայմաններում և բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությամբ ստորագրվեց: Այնուամենայնիվ, այն ոչ միանշանակ ընդունվեց ոչ միայն Աֆղանստանում այլ նաև ողջ աշխարհում:

Դոհայի համաձայնագիրը և հիմնական բաղադրիչները

Համաձայնագրի տեղքտը բաղկացած է երեք մասից, որոնցում ներառված են հիմնական կետերը և ենթակետերը: Համաձայնագրի վերնագիրը ինքնին ցույց է տալիս, որ կնքման գլխավոր նպատակը խաղաղությունն է, քանզի վերնագրվում է որպես «Համաձայնագիր Աֆղանստանում խաղաղություն հաստատելու համար» [14]: Հետագա ձևակերպումներում ակնհայտ է, որ Միացյալ Նահանգները չի ճանաչում Տալիբանին որպես իշխանություն Աֆղանստանում՝ փորձելով դիվանագիտորեն ձևակերպել, որ համաձայնագիրը ոչ թե Տալիբանի իշխանության ճանաչումն է, այլ ռազմական գործողություններին վերջ տալը և խաղաղություն հաստատելը [15]:

Համապարփակ և կայուն խաղաղության համաձայնագիրը ներառում է չորս մաս.

- երաշխիքներ՝ կանխելու Աֆղանստանի հողի օգտագործումը ցանկացած միջազգային ահաբեկչական խմբավորումների կամ անհատների կողմից Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների անվտանգության դեմ,
- Աֆղանստանից ԱՄՆ-ի և կոալիցիայի բոլոր ուժերի դուրսբերման ժամանակացույցը,
- Տալիբների և Աֆղանստանի Իսլամական Հանրապետության ներառական բանակցային թիմի միջև ներաֆղանական երկխոսության և բանակցությունների արդյունքում քաղաքական կարգավորում
- մշտական և համապարփակ զինադադար:

Այս չորս մասերը փոխկապակցված են միմյանց: Երկար տարիներ տևած պայքարից հետո խաղաղության ձգտումը արտացոլում է բոլոր կողմերի նպատակը, ովքեր ձգտում են ինքնիշխան, միասնական Աֆղանստան՝ իր հարևանների հետ խաղաղության մեջ: Համա-

ձայնագրի տեքստում կողմերը ընդգծում են նաև, որ առաջին երկու մասերի վերաբերյալ համաձայնությունը ճանապարհ է հարթում վերջին երկու մասերի իրագործման համար:

Աֆղանստանի Իսլամական Էմիրության պարտավորությունները, որը ԱՄՆ-ի կողմից չի ճանաչվել որպես պետություն և այս համաձայնագրում հայտնի է որպես Տալիբան, իրականացվում են նրանց վերահսկողության տակ գտնվող տարածքներում մինչև աֆղանական իսլամական նոր կառավարության ձևավորումը, որը կորոշվի Աֆղանստանի կողմից ներաֆղանական երկխոսության և բանակցությունների միջոցով: Պետք է շեշտել, որ բանակցությունների ողջ ընթացքում և համաձայնագրի տեքստում Միացյալ Նահանգները կարևորում է ներաֆղանական բանակցությունները, ավելին բանակցությունների սկզբում այն կարևոր պայման էր հանդիսանում, սակայն ակնհայտ էր, որ աֆղանական կառավարությունը Աշրաֆ Դանի գլխավորությամբ ամեն կերպ փորձում էր հրաժարվել երկխոսությունից: Իրավիճակը կտրուկ փոխվեց միայն այն ժամանակ, երբ արդեն պարզ էր, որ Միացյալ Նահանգները միակողմանիորեն բանակցություններ է վարում Տալիբանի հետ՝ խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Տեքստի առաջին մասում հիշատակվում է, որ ԱՄՆ-ն և կոլաիցիոն ուժերը պետք է 14 ամսում դուրս բերեն իրենց զորքերը Աֆղանստանից: Այն բաժանում են երկու հիմնական փուլի առաջին՝ 135 օրվա ընթացքում պարտավորվում են նվազեցնել զորքերի թիվը հասցնելով մինչև 9600-ի, իսկ երկրորդ փուլով 9.5 ամսվա ընթացքում դուրս հանել մնացած ուժերը: ԱՄՆ և կոլաիցիոն ուժերը պարտավորվում էին նաև դուրս բերել իրենց 5 ռազմակայանները:

Միացյալ Նահանգները պարտավորվում էր անհապաղ սկսել աշխատել բոլոր համապատասխան կողմերի հետ ռազմական և քաղաքանտարկյալներին արագ ազատ արձակելու ծրագրի շուրջ՝ որպես վստահության ամրապնդման միջոց՝ բոլոր համապատասխան կողմերի համակարգմամբ և հաստատմամբ: Աֆղանստանի Իսլամական Էմիրությունը պարտավորվում է, որ իր ազատ արձակված բանտարկյալները հավատարիմ կլինեն սույն համաձայնագրում նշված պարտականություններին, որպեսզի նրանք վտանգ չներկայացնեն երկրի Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների անվտանգությանը:

Ներաֆղանական բանակցությունների մեկնարկով Միացյալ Նահանգները կնախաձեռնի ԱՄՆ-ի գործող պատժամիջոցների ցուցակի վերանայում Աֆղանստանի Իսլամական Էմիրության անդամների դեմ՝ նպատակ ունենալով վերացնել այդ պատժամիջոցները մինչև 2020

թվականի օգոստոսի 27-ը: Միացյալ Նահանգները և նրա դաշնակիցները գերծ կմնան Աֆղանստանի տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի սպառնալիքից կամ կիրառումից կամ նրա ներքին գործերին միջամտելուց:

Համաձայնագրի երկրորդ մասը ամբողջովին վերաբերում է Տալիբանի պարտականություններին, որի առաջին կետով պարտավորվում է քայլեր ձեռնարկել, ցանակացած անհատի կամ խմբի կողմից, ներառյալ «ալ-Կաիդա»-ն, կանխել աֆղանական հողը օգտագործել որպես սպառնալիք ԱՄՆ-ի և դաշնակիցների համար: Երկրորդ մասում ավելի քան 5 ենթակետով ներկայացվում են այն հիմնական քայլերը և առաջնահերթությունները, որոնք պիտի իրականացվի Տալիբանի կողմից կանխելու ցանկացած ոտնձգություն Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների դեմ՝ կապված վիզաների, կացության մինչև վիզաների տրամադրման վերաբերյալ:

Երրորդ մասը հիմնականում նվիրված է ներաֆղանական բանակցություններին, հատկապես շեշտվում է, որ նախ Միացյալ Նահանգները կլինողի ճանաչել և հաստատել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին այս համաձայնագիրը: Միացյալ Նահանգները և Տալիբանը ձգտում են դրական հարաբերություններ ունենալ միմյանց հետ և ակնկալում են, որ հարաբերությունները Միացյալ Նահանգների և հետկարգավորվող նոր Աֆղանստանի միջև, որը կորոշվի ներաֆղանական երկխոսությամբ և բանակցություններով, դրական կլինի: Միացյալ Նահանգները կձգտի տնտեսական համագործակցություն վերակառուցման համար Աֆղանստանի նոր կառավարության հետ և չի միջամտի իր ներքին գործերին:

Եզրակացություն

Սույն հոդվածով եկանք այն եզրահանգումներին, որ ավելի քան չորս տասնամյակ տեղի ունեցած պատերազմները իրենց հանգուցալուծմանը հասան Դոհայի համաձայնագրով: Ակնհայտ է, որ արդեն բավականին երկար ժամանակ ամերիկյան արտաքին քաղաքականության ուղեծրում կարևորվում էր ԱՄՆ և կոլաիցիոն զորքերի դուրսբերման հարցը Աֆղանստանից: Սրա մասին վկայում է այն փաստը, որ զորքերի դուրս բերման թե բանակցային և թե իրականացման գործընթացներ տեղի ունեցան ԱՄՆ-ի վերջին երեք նախագահների օրոք:

Դեռևս 2018 թ.-ից սկսված բանակցությունները ցույց էին տալիս, որ Միացյալ Նահանգները գնում է խնդրի կտրուկ լուծմանը և Տալիբանի հետ բանակցությունները պետք է հանգեցնեին Աֆղանստանից ամերիկյան զորքերի դուրսբերմանը, իսկ ինչ վերաբերում է Աֆղանստանում

ներքին հակամարտությունների վերացմանը, ապա Ղանիի գլխավորած իշխանությունը գնում էր միմիայն Տալիբանի թուլացման և ոչնչացման ճանապարհով, ինչը իրականացնելու ներուժը նա ակնհայտորեն չուներ:

Դոհայի համաձայնագիրը փաստացի հիմնվում է չորս հիմնակետի վրա՝ ամերիկյան և կոալիցիոն զորքերի դուրբերում, Տալիբանի կողմից հակաառաջնորդական գործողությունների իրականացում, ներառյալական բանակցությունների իրականացում, համապարփակ և երկարատև խաղաղության հաստատում: Ժամանակը, սակայն, ցույց տվեց որ այս կետերը գրեթե կյանքի չկոչվեցին և Տալիբանի իշխանության գալուց հետո տարածաշրջանը շարունակում է մնալ լարված և պայթունավտանգ: Համաձայնագրի յուրաքանչյուր կետով սահմանվում է կողմերից յուրաքանչյուրի գործառույթը խաղաղության հասնելու համար, սակայն, Տալիբանը այդպես էլ վստահություն չստեղծեց հետագա կարգավորումների համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Մաթևոսյան Հ.** ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ուղղությունների փոփոխությունը ծայրահեղականության դեմ պայքարում («ալ-Կաիդա»-ի օրինակով), էջեր 30-39: // ԵՊՀ Գիտական հանդես «Արևելագիտության հարցեր», հ. XX, 2021: – 162 էջ:
2. **Մաթևոսյան Հ.** «ԱՄՆ-Տալիբան հարաբերությունների բարդ դինամիկան 1996-2001 թթ.», էջեր 28-33: // научно-аналитический журнал «Регион и мир», հատ. ԺԵ, հմ 4 (53), 2024. – 228 էջ:
3. **Folse M.** “Operation Enduring Freedom, The United States Army In Afghanistan, September 2001-March 2002”. U.S. Army center of military history. – Washington, 2022.
4. **Malkasian C.** The American war in Afghanistan : a history. – New York, Oxford University Press, 2021, pp. 76-78.
5. “Resolute Support Mission in Afghanistan (2015-2021)”. NATO, 30 May 2022, https://www.nato.int/cps/en/natohq/topics_113694.htm, (դիտման ամսաթիվ 14.01.2024).
6. **Sen A.** Trump picks Zalmay Khalilzad, Atlantic Council board director, as special representative on Afghanistan. // Atlantic Council, 5 Sept., 2018, <https://www.atlanticcouncil.org/blogs/new-atlanticist/trump-picks-zalmay-khalilzad-atlantic-council-board-director-as-special-representative-on-afghanistan/>, p.2.
7. **Green M.** Man in the News: Mullah Abdul Ghani Baradar. // Financial Times, 20 Feb. 2010, <https://www.ft.com/content/4b922166-1d8d-11df-a893-00144feab49a>, p.3.
8. **Shah S.** Afghanistan’s No. 2 Taliban Leader Captured in Pakistan. // McClatchy Newspapers, 16 Feb. 2010, <https://truthout.org/articles/afghanistans-no-2-taliban-leader-captured-in-pakistan/> (դիտման ամսաթիվ՝ 18.02.2024).
9. Pakistan frees Taliban co-founder at US request; will play constructive role in Afghan peace initiative. // National Herald, 9 Feb. 2019, https://www.nationalheraldindia.com/international/pakistan-frees-taliban-co-founder-at-us-request-will-play-constructive-role-in-afghan-peace-initiative#google_vignette (դիտման ամսաթիվ՝ 16.02.2024).
10. **Mashal M.** U.S. to Withdraw About 7,000 Troops From Afghanistan, Officials Say. // The New York Times, 20 Dec. 2018, <https://www.nytimes.com/2018/12/20/us/politics/afghanistan-troop-withdrawal.html>, p.3.
11. **Miller L.** Interpreting the U.S. Talks with the Taliban, // Crisis Group, 29 Jan. 2019, <https://www.crisisgroup.org/asia/south-asia/afghanistan/interpreting-us-talks-taliban>, (դիտման ամսաթիվ 18.02.2024).
12. Biden lost faith in the US mission in Afghanistan over a decade ago. // CNBC, 9 Jul 2021, <https://www.cnbc.com/world/biden-lost-faith-in-the-us-mission-in-afghanistan-over-a-decade-ago-analysis-9934931.htm>, p.5.
13. **Vinjamuri L.** Biden’s Realism, US Restraint, and the Future of the Transatlantic Partnership. – London: LSE press, 2022, p. 260.
14. Agreement for Bringing Peace to Afghanistan between the Islamic Emirate of Afghanistan which is not recognized by the United States as a state and is known as the Taliban and the United States of America. 29 Feb. 2020, <https://www.state.gov/wp-content/uploads/2020/02/Agreement-For-Bringing-Peace-to-Afghanistan-02.29.20.pdf> (դիտման ամսաթիվ՝ 05.06.2024).
15. Joint Declaration between the Islamic Republic of Afghanistan and the United States of America for Bringing Peace to Afghanistan. 29 Feb. 2020 <https://www.state.gov/wp-content/uploads/2020/02/02.29.20-US-Afghanistan-Joint-Declaration.pdf> (դիտման ամսաթիվ՝ 13.05.2024).

Տճան/Հանձնվել է՝ 03.10.2024
Рецензирована/Գրախոսվել է՝ 09.10.2024
Принята/Ընդունվել է՝ 16.10.2024